ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«12» հոկտեմբեր 2019թ. N 408-Հ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 2061-Ա հրամանի 6-րդ կետը և հաշվի առնելով, որ «Եվրոպական բիզնես ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ք. Երևան, Բուզանդի 3, «Ռոյալ Կլասիկ Հաուս» բիզնես կենտրոն, պետական գրանցման համար՝ 211.171.1057706, 08.02.2019 թվական) կողմից ներկայացված դիմումը չի համապատասխանում նույն աշխատակարգի 4-րդ կետի պահանջներին, այն է՝ դիմում ներկայացրած հասարակական կազմակերպությունը չունի 2 տարվա փորձառություն, ինչը հիմնավորվում է վերջինիս կողմից ներկայացված ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության քաղվածքով, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Մերժել ՀՀ ֆինանսների նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով «Եվրոպական բիզնես ասոցիացիա» ՀԿ-ի կողմից 25.06.2019 թվականին ներկայացված դիմումը:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հասցեատիրոջը իրազեկելուն հաջորդող օրվանից:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱՋՅԱՆ